600.0216.17.06.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2020 թվականի №216Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի №486Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 10-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու համար մրցույթի կազմակերպման կանոնները հաստատելու մասին» №486Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու համար մրցույթի կազմակերպման կանոններում» (այսուհետ՝ Կանոններ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

   1) Կանոնների 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «1. Յուրաքանչյուր մրցույթի կազմակերպման վերաբերյալ ՀԾԿՀ-ն համապատասխան որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանում է ոչ խտրական, ողջամիտ կանոններ՝ ամրագրելով դիմումատուին ներկայացվող (ներառյալ նախաորակավորման) պահանջները, այդ թվում՝ կատարման ենթակա վճարները, որոնց ապահովման դեպքում միայն անձը կարող է մասնակցել մրցույթին, ինչպես նաև հաստատում է մրցութային փաթեթը:»,

   «3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ՀԾԿՀ-ի և իրավասու մարմնի ներկայացուցիչները (համաձայնությամբ): Հանձնաժողովի կազմում կարող են

ընդգրկվել նաև շահագրգիռ այլ պետական մարմինների ներկայացուցիչներ (համաձայնությամբ), ինչպես նաև անկախ փորձագետներ:»,

«5. Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձը Որոշումն ուժի մեջ մտնելու պահից 30 օրվա ընթացքում հանձնաժողով է ներկայացնում հետաքրքրության վերաբերյալ հայտ, որը պետք է ներառի ՀԾԿՀ-ի կողմից սահմանված նախաորակավորման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ հիմնավորումներ:»,

«7. Սույն կանոնների 5-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո 20 օրվա ընթացքում հանձնաժողովն իրականացնում է նախաորակավորում և առաջարկում է ՀԾԿՀ-ին հրապարակել սույն կանոնների 1-ին կետով սահմանված պահանջներին և փաստաթղթերին համապատասխանող նախաորակավորված անձանց ցանկը: ՀԾԿՀ-ն հրապարակում է նախաորակավորված անձանց ցանկը՝ նախաորակավորման իրականացման համար սույն կետով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում:»,

«8. ՀԾԿՀ-ն՝ նախաորակավորված անձանց ցանկի հրապարակումից հետո, վերջիններիս դիմումի հիման վրա տրամադրում է մրցութային փաթեթը՝ Որոշմամբ սահմանված ժամկետում և կարգով:».

2) Կանոնների 4-րդ և 6-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) Կանոնների 9-րդ և 10-րդ կետերում «անուն ազգանունների (անվանումների) հրապարակումից հետո 40» բառերը փոխարինել «ցանկի հրապարակման համար սույն կանոնների 7-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո 30» բառերով.

4) Կանոնները լրացնել 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19. Մեկ հայտատուի դեպքում սույն կանոնների 15-րդ և 16-րդ կետերով սահմանված բողոքարկման ժամկետները չեն գործում, և ՀԾԿՀ-ն հաղթողին տրամադրում է վերջնական թույլտվություն սույն կանոնների 10-րդ կետում նշված ժամկետը լրանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

20. Մրցույթի շրջանակում հետաքրքրության որևէ հայտ չներկայացվելու, մասնակիցներից որևէ մեկի նախաորակավորման փուլը չանցնելու, սույն կանոնների 10-րդ կետով սահմանված հայտ-առաջարկ չներկայացվելու, մրցույթի արդյունքում որևէ հաղթող չճանաչվելու, մեկ նախաորակավորված

մասնակցի դեպքում վերջինիս կողմից հայտ-առաջարկում նշված գումարը չվճարելու, իսկ մեկից ավելի նախաորակավորված մասնակիցների պարագայում՝ սույն կանոնների 18-րդ կետի համաձայն հայտ-առաջարկում նշված գումարը չվճարելու դեպքում՝ մրցույթը համարվում է չկայացած:

21. Մրցույթը համարվում է ավարտված ՀԾԿՀ-ի կողմից վերջնական թույլտվության տրամադրման արդյունքում մրցույթում առաջարկված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պահից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
17 հունիսի 2020թ.